

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Հանելուկ

Ի՞նչն է՝
Չի սուզվում ջրում,
Չի այրվում հրում:

- Ա) սունկը
- Բ) սեղանը
- Գ) սավանը
- Դ) սառույցը
- Ե) սոխը

2. Ո՞ր բառն է թաքցրել մեղվիկը Պ. Սևակից բերված տողում.

Ես կարող եմ ենթադրել... Թե այս լեռը մի շուն տված հսկա



Է:

- Ա) փիղ
- Բ) մուկ
- Գ) գլեռ
- Դ) փոս
- Ե) բեռ

3. Բառազույգերը կազմված են որոշակի օրինաչափությամբ: Ըստ այդ օրինաչափության՝ ո՞ր բառն է թաքցրել մեղվիկը:

պատուհան – հանելուկ

շղթայակապ – կապուտակ

առաստաղ – տաղերգու

փորձանոթ – նոթատետր

գնդաստղ –



- Ա) հուշատետր
- Բ) տաղարան
- Գ) սեղանակից
- Դ) փորձաշրջան
- Ե) ցանկապատ

4. Մանեն *միառժամանակ* բառից հանեց երկու տարբեր դերանուն, այնուհետև ժամանակի չափման միավորը: Մնացած տառերով ի՞նչ բառ կարդաց Մանեն:

- Ա) մարմնի մաս
- Բ) հապճեպ, շտապ կատարվող
- Գ) տարվա եղանակ
- Դ) մշակովի բույս
- Ե) բարոյախրատական երկ

5. Նկարելուկով գաղտնագրված է ջրի հոսքը արգելողի անվանումը: Պատասխանի ո՞ր տարբերակում է այն:



- Ա) ամբարտավան
- Բ) ամբարիշտ
- Գ) ամբարտակ
- Դ) պատրվակ
- Ե) պատգարակ

6. Մեղվաշենում լինում են այսպիսի միացումներ.

ՄԱԾՈՒՆ + ԶՈՒՐ = ԹԱՆ

ԹԱՆ + ՁԱՎԱՐ = ՍՊԱՍ

ՑԻՆԿ + ՊՂԻՆՁ = ԱՐՈՒՅՐ

ԶՐԱԾԻՆ + ԹԹՎԱԾԻՆ = ԶՈՒՐ

ԶՈՒՐ + ՎԱՐԴ = 

Պատասխանի տարբերակներից որի՞ն է փոխարինում մեղվիկը:

- Ա) ՏՈՒՆԿ
- Բ) ՎԱՐԴԱՎԱՐ
- Գ) ՀԱՄԵՐԳ
- Դ) ԱՂՎԵՍ
- Ե) ԱՆՈՒՆ

7. Դերձակի աշխատանքային պարագաներից մեկը հնարամտորեն թաքնվել է բերված նախադասության մեջ: Ո՞ր տարբերակի բառն է «հնարամիտը»:

Աղանամուծին լեռնագագաթին դրված տձև զամբյուղն ընկավ:

- Ա) դերձան
- Բ) մկրատ
- Գ) գնդասեղ
- Դ) մատնոց
- Ե) ասեղ

8. Ի՞նչ է գաղտնագրվել:

ՅՁԾՓՇ ԺՄԲՏ

- Ա) Ափսեն տվեք:
- Բ) Մեղուն թռավ:
- Գ) Մարդը գնաց:
- Դ) Մարդը թռավ:
- Ե) Մեղուն եկավ:

9. Քանի՞ դերանուն է թաքնվել Տերյանի բանաստեղծության տողում ձախից աջ՝ առանց տառերի տեղերը փոխելու:

Իրիկնաժամին թփերն օրորող հովի պես թեթև...

- Ա) 4
- Բ) 5
- Գ) 6
- Դ) 7
- Ե) 8

10. Նախադասության մեջ քանի՞ բառում է սխալ թույլ տվել Անգետիկը.

Նրփիրան Սրբուհին, ոսկեգոծ վարսերն արցակելով, հափշտապ դուրս վազեց պատշկամբ դիմադրելու եղբորը:

- Ա) 2
- Բ) 6
- Գ) 7
- Դ) 9
- Ե) 11

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Տիգրանը *հոգատար, հոգեպարար, հոգևոր, հոգեկան, հոգաբարձու, հոգածու, հոգեբան* բառերը որոշակի օրինաչափությամբ խմբավորեց առանձին սյունակներում: Քանի՞ սյունակ ստացվեց:

- Ա) 1
- Բ) 2
- Գ) 3
- Դ) 4
- Ե) 5

12. Ի՞նչ է թաքցրել մեղվիկը:

շերտ + հակ  =

- Ա) շիկահեր
- Բ) հարկաշատ
- Գ) հրեշտակ
- Դ) հատկանիշ
- Ե) երկշերտ

13. Պատասխանի տարբերակների գույներից որի՞ ընկերն է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

գլան, գանգուր, գգրոց, գունդ, գրտնակ

- Ա) դեղին
- Բ) կանաչ
- Գ) սպիտակ
- Դ) կարմիր
- Ե) կապույտ

14. Մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը «Կյանքիս հուշերից» գրքում գրում է, որ իր ուսման տարիներին աշակերտներին գնահատում էին ոչ թե թվերով, այլ բառերով: Ո՞ր գնահատականը տեսնելով շատ լավ սովորող Հրաչյայի օրագրում նրա կիսագրագետ հայրը զայրացավ. «Ինչո՞ւ միայն մի հատ լավ ունես, մյուսները ... են»:

- Ա) միջակ
- Բ) գերազանց
- Գ) բավարար
- Դ) անբավարար
- Ե) լավագույն

15. Հայոց ո՞ր թագավորի անունն է հնարամտորեն թաքնվել բառաշարքում:

սոխակ, ալոճ, պիստակ, կարտոֆիլ, քլորաջուր, կավագործ

- Ա) Արգիշտի
- Բ) Տրդատ
- Գ) Խոսրով
- Դ) Տիգրան
- Ե) Սմբատ

16. Պատասխանի տարբերակներից ո՞րը նոր շունչ կտա *ահ, աղ, աքար, յուղ, ոգի, տապ* բառերին:

- Ա) բեն
- Բ) գիմ
- Գ) կեն
- Դ) շա
- Ե) տյուն

17. Պատասխանի տարբերակներից ո՞րը թվարկված բառերից ոչ մեկի համար ընդհանրական անվանում չի կարող լինել:

ծառեր, նավեր, գրքեր, հեծյալներ, գնացքներ

- Ա) զեռուն
- Բ) այրուձի
- Գ) անտառ
- Դ) տորմիղ
- Ե) գրադարան

18. Բառագույգերում միևնույն սկզբունքով տեղադրելով երկհնչյունների միևնույն գույգը՝ բառերին կտանք տարբեր իմաստներ՝ բացի մեկից: Ո՞րն է այդ մեկը:

*բ...ր — բ...ր,
հ...ս — հ...ս,
թ...ր — թ...ր,
ք...ր — ք...ր,
ս...ն — ս...ն*

- Ա) բ...ր — բ...ր
- Բ) հ...ս — հ...ս
- Գ) թ...ր — թ...ր
- Դ) ք...ր — ք...ր

Ե) ս...ն — ս...ն

19. Ի՞նչ բառակապակցություն է գաղտնագրել Վազգենն իր մասնագիտությամբ:

- Ա) ոսկի տանտիկին
- Բ) կրկնակի կտակ
- Գ) տատիկի սրտիկ
- Դ) աննկատ կատակ
- Ե) տիկնիկի ոտիկ



3,4,5,7,4,5,4,1,3,4,5

20. Չորս տարբերակներում երեքական տառ նույն սկզբունքով և՛ պոչ է, և՛ գլուխ: Ո՞ր տարբերակն է զուրկ այս հատկությունից:

- Ա) երկաթաթերթ
- Բ) երիզաժապավեն
- Գ) հաստատաքայլ
- Դ) հատակամաքրիչ
- Ե) կայծակախառն

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Ո՞ր ասացվածքն է գաղտնագրվել:

Մենեչձա մենայբրեդարթ մենեչձա խեեչյունքե կենունուեչնուայբ

- Ա) Մեծի խոսքը չեն կտրի:
- Բ) Մեծը մեծ համբերություն կունենա:
- Գ) Մեծ մարդը մեծ խելք կունենա:
- Դ) Մեծի խոսքը որ չլսվի էլ, գետնին չի մնա:
- Ե) Մեծին լսողի ոտքը քարին չի առնի:

22. Ի՞նչ բառ է գաղտնագրվել:

- Ա) ճենապակի
- Բ) ճախարակ
- Գ) հախճապակի
- Դ) ճախրանվակ
- Ե) հաճախակի



23. Կարենը որոշակի օրինաչափությամբ գրել է յոթ բառ՝

երկյուղայի, երեքայի, չորսվանկանի, հինգհարկանի, ուրախատիթ, շահույթ,




Ո՞րն է մեղվիկի թաքցրած յոթերորդ բառը:


- Ա) պատանի
- Բ) կնճիթ
- Գ) սարսափելի
- Դ) կիսանդրի
- Ե) ամսաթերթ

24. «Կոտորակագիր» կոչվող ծածկագրում հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ներկայացվում է որպես կետերից ու մի գծիկից բաղկացած պատկեր: Այդ տառերից երեքը երևում են նկար 1-ում: Կռահիր, թե ինչ օրինաչափությամբ են կետերը կապված տառերի հետ, և որոշիր, թե ինչ առած է ծածկագրված նկար 2-ում:

Նկար 1



Նկար 2




- Ա) Ինձ լսիր, քոնը արա:
- Բ) Ոչ մեկին մի՛ լսիր:
- Գ) Ուրիշի ասածով մի՛ գնա:
- Դ) Ինձ տես, քեզ խղճա:
- Ե) Ոչ մեկին մի՛ խղճա:

25. Տառն անվանենք փոխարինելի, եթե այն հնարավոր է փոխարինել մեկ այլ տառով այնպես, որ ստացվի իմաստալից մեկ այլ բառ: Օրինակ՝ *մածուկ* բառում *կ* տառը փոխարինելի է, քանի որ այն կարող ենք փոխարինել *ն* տառով և ստանալ *մածուն* բառը: Քանի՞ փոխարինելի տառ կա *հատակ* բառում:

- Ա) 1
- Բ) 2
- Գ) 3
- Դ) 4
- Ե) 5

26. Օգտվելով բանալուց՝ գտե՛ք գաղտնագրված բառը: Ի՞նչ ստացաք:

- Ա) միրգ
- Բ) մուրակ
- Գ) գրենական պիտույք
- Դ) գիշատիչ կենդանի
- Ե) կահույքի մաս



27. Նարեհ համակարգչով մուտքագրել էր *անկար, բազուկ, կարագ, կարկին, կոկիկ* բառերը: Կատակասեր Նարեհն այդ բառերում բոլոր *կ* տառերը փոխարինեց մեկ այլ միևնույն տառով: Դրանից հետո ուղղագրությունը ստուգող ծրագիրը որպես սխալ ընդգծեց բառերից միայն մեկը: Նարեհի ո՞ր բառը Նարեհի «շնորհիվ» դարձավ սխալ:

- Ա) անկար
- Բ) կարկին
- Գ) կոկիկ
- Դ) բազուկ
- Ե) կարագ

28. Վերծանի՛ր խառնագրված նախադասությունը և փսփսա՛ մեղվիկի ականջին:

Դթարասըրեն նե դեժու ամցուք ռաժի վրոմուր


- Ա) Ծառի սաղարթները օրորվում են ուժեղ քամուց:
- Բ) Սաղարթները քամուց օրոր են ասում ծառին:
- Գ) Քամին օրորոց է ծառի սաղարթներին:
- Դ) Ուժեղ քամուն օրոր են ասում սաղարթները ծառի:
- Ե. Ուժեղ քամին օրոր է ասում ծառի սաղարթին:

29. Գումարում և հանում մաթեմատիկական գործողությունների միջոցով պարզի՛ր՝ որ առաձև է ծածկագրված:

900-400; 1000+6000; 700-300; 9-1; 600-100; 8-7; 100+300; 10-1; 6-5; 3+6; 200+500; 10+10;
30+30; 100-50; 2000+5000; 600-400:

- Ա) Շունը մարդու ընկերն է:
- Բ) Ժամանակը ոսկի է:
- Գ) Շունը շան թաթ չի կծում:
- Դ) Շունը շնից, երկուսը մի տնից:
- Ե) Շանը շապիկ կհագցնի, կատվին՝ վարտիք:

30. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրվել նկարելուկով:



- Ա) Միակ մարդը նա է:
- Բ) Մեն-մենակ գևաց նա:
- Գ) Մենակ մի՛ մնա:
- Դ) Մենակ-մենակ մի՛ գևա:
- Ե) Մենակ մտիր նավ: